ԴՐՕՇԱԿ

„ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ“ ՕՐԳԱՆ

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ A.R.F. BURO LIBRARY

ՄԱՏՆԻՉ ՎԻՐԱԲՈՅԺ ԹԻԹԻՆՋԵՎԻ ՋԱՐԿՈՒՄՆ

Սոֆիայից մեզ հեռագրում են.—

Յունիսի 23-ին (ն. տ.) երեկոյեան ժամը 9-ին Կ. Պոլսում դաշնակցականները զարկեցին նշանաւոր ՄԱՏՆԻՉ վիրաբոյժ ԹԻԹԻՆՋԵՎԻՆ։ Մատնիչը մերձ ի մահ է։ Ահաբեկիչները ազատ են։ Ժողովրդի ոգևորութիւնը անսահման է։ Անսահման է նոյնպէս թիւրք կառավարութեան սարսափը։ Կառավարական շրջանների մէջ ընդհանուր յուզում։ Մանրամասնութիւնները նամակով։

ՀԱՄԻԴԻԷ ՀԵԾԵԼԱԳՈՒՆԴԻ ԿԻՍԱԲԱԺՆԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ

(Թարգմանութիւն)

Վսեմ. էֆէնդի,

Ներփակ կը հաղորդեմք Ձեր Վսեմութեան Մալազկերտ գաւառի Թիւսթէմ Կէտիկ գիւղացի բայաներէն (հարկաւ հայ) Խաչօ անուն անձին աղերսագիրը, որով կը յայտնէ նա, թէ հայաստանցի Աշիրէթի քրդերը իր վրայ յարձակելով՝ յափշտակեր են երկու գոմէշ և երկու ձի, որոնք՝ խուզարկելով, գտնուեր են Եէքմալ գիւղացի Խալիլ աղայի տունը, ուստի և կը խնդրէ, որ այդ անասունները ետ առնուին ու իրեն յանձնուին։ Հանրածանօթ իրողութիւն մ՚է, թէ որ աստիճան կարևորութիւն ստացեր են այս հայերուն չարամտութիւնը և օտար պետութեանց չար դիտաւորութեան այս տեսակ ակնարկները։ Եւ որովհետև այս միջոցիս գործերու սոյն ընթացքը և փափուկ ու սրբազան քաղաքականութեան հրատապ սոյն վիճակը կը պահանջեն, որ բողոքի առթիւ ոչ ոքի չթոյլատրուի Մուշ գալու. հետևաբար պէտք է, որ արդարութեան ամեն պահանջ ժամանակին գործադրէք և միանգամայն մեծ ուշադրութիւն դարձնէք, հետազօտելու և գտնելու այն միջոցները, որոնցմով կարելի լինի գէթ առ այժմ Համիդիէի հեծելագունդերու պետերը գովելի վարմանց մէջ դնել, և առ այս ձեռք առնելիք միջոցներն ալ մեզ ծածկաբար տեղեկագրէք և յիշեալին խնդրագրին ու ներփակ թղթոյն իմաստին համեմատ հարկ եղած գործադրութիւնը և ասոր հետևանքը իմացնէք։

Համիդիէի և կանոնաւոր զօրաց կիսաբաժինների հրամանատարի փոխանորդ

ՄԵՐԼԻՎԱ

ՄԷՀՄԷՏ ՐԷՀՄԻ

1 Մարտ 1895,
Մուշ

(Կնիք)

ՐԷՖՕՐՄՆԵՐԸ

I

1-ն Յուլիսի 1895 թ.

Տաճկահայաստանում մոցնելիք երեք պետութիւնների կազմած ռէֆօրմները, որ մի ժամանակ խստութեամբ իբրև գաղտնիք էին պահւում, այժմ հրապարակի վրայ են դրուած իրենց ամբողջութեամբ։

Դեռ այդ ռէֆօրմները չհրատարակուած, դեռ բոլորովին անծանօթ նրանց բովանդակութեան, մենք առանց մի որ և է վերապահութեան, բացարձակապէս վերաբերուել ենք բացասօրէն, իսկ այսօր կարող ենք բնաւորոշել հետևեալ խօսքով՝—սարը երկունքի մէջ էր և վիժեց։ Հենց սկզբից էլ մենք այլապէս չէինք կարող վերաբերուել, որովհետև բաւական էր մեզ, որ ռէֆօրմները կազմում է մէնմենակ դիպլոմատիան, և ոչ մինչև իսկ նոյն երկրի ժողովրդներից ընտրուած ներկայացուցիչների աջակցութեամբ, մի կողմից, իսկ միւս կողմից էլ, որ նրանք, ռէֆօրմները, այսպէս թէ այնպէս, սուլթանի կառավարութեան հաւա-

նութիւնը պիտի ստանային. հետեւապէս և այդ ռէֆորմները իրենց էութեամբ երբէք չէին կարող լինել կազմուած երկրի՝ Տաճկահայաստանի և նրա ժողովրդների շահերի, պահանջների համեմատ, որովհետև ո՛չ դիպլոմատիան և ո՛չ էլ սուլթանի կառավարութիւնը երբէք չեն ղեկավարուիլ այդ երկրի, այլ „իրենց պետական շահերով“. մինչդեռ եթէ դիպլոմատիայի հետ մասնակցէին և երկրի ներկայացուցիչները, մեզ ենթադրել կը տային, թէ գուցէ մասամբ երկրի ժողովրդների շահերը կարող կը լինէին այնտեղ տեղ բռնել։

Մենք ասում ենք՝ արդէն մեզ բաւական է, որ ռէֆորմներ կազմողը բացառապէս դիպլոմատիան էր,— մի կողմը թողնելով մինչև իսկ, որ այդ ռէֆորմները պէտքէ սուլթանի կառավարութեան հաւանութիւնը գտնէին՝ ոյժ ու զօրութիւն ստանալու համար,— որ մենք հենց սկզբից բացասօրէն վերաբերուէինք՝ առանց ծանօթ լինելու անգամ նրանց բովանդակութեանը, որովհետև դիպլոմատիայի հասարակական վարդապետութիւնը ո՛չ թէ մարդկային իրաւունքների հաւասարութիւնն է, ոչ թէ անհատական ու հասարակական ազատութիւնն է, նրա ոգին՝ ո՛չ թէ մարդասիրական գաղափարներն են, իսկ հաւատը՝ թոյլերին, կեղեքուողներին, հալածուողներին, բռնաբարուողներին պաշտպանելը, դիպլոմատիան շա՜տ-շատ հեռու է դրանից, այլ որ նրա ամբողջ գոյութիւնը հիմնուած է „պետական շահերի“ վրայ և դրանից դուրս նա ոչինչ չէ ճանաչում՝ նա ամէն ինչ զոհ կը բերի դրան, այլ որ նրա գործունէութեան դրդիչ ոյժը, իր պետութեան համար „չաղ կտոր“ ձեռք բերելն է՝ ի վնաս ինչի և ում էլ ուզում է լինի, այդ մի և նոյն է։ Դիպլոմատների բերնում յորջորջւող մարդասիրութիւն, քաղաքակրթութիւն, կամ, ինչպէս շատ են սիրում ասել Հայկական խնդրում, „քրիստոնէութիւն“ բառերը դատարկութիւններ են և դրանք միայն իբրև զէնք են, միջոց են նրանց ձեռքում իրենց նպատակին ծառայեցնելու, դրանք դիմակներ են դիմակաւորելու իրենց պետական շահերը։

Դիպլոմատիայի ձեռքով կազմած ռէֆորմները ամենից առաջ պիտի բաւականութիւն տային Տաճկահայաստանում շահ ունեցող իւրաքանչիւր պետութեան առանձին առանձին և ոչ թէ այդ երկրում ապրող ժողովրդներին. երկրորդ՝ ընդհարում չառաջացնելու համար, նրանք պիտի համերաշխացնէին հակառակորդ պետութիւնների շահերը, երրորդ՝ նրանք մի և նոյն ժամանակ համ պիտի պաշտպանէին սուլթանի կառավարութեան իշխանութիւնը, չորրորդ՝ համ էլ հայ ժողովրդի աչքերին թոզ փչելով, հայկական յեղափոխութեան առաջն առնէին, որպէս զի հնարաւոր լինի պահպանել քաղաքական կացութիւնը, statu quo։

Ահա թէ դիպլոմատիան ինչ մօտիւներով է ղեկավարուել Տաճկահայաստանի համար ռէֆորմներ խմբագրելիս, ահա Տաճկահայաստանի համար ծրագրուող ռէֆորմները բացառապէս դիպլոմատիայի ձեռքով կազմած, պիտի անցնէին այս բարդ և վերին աստիճանի դժուարին ճանապարհներով, մինչև որ նրանք կարողանային հասնել բուն երկիրը։ Նրանք անցան ճանապարհի մի մասը, բայց դեռ միւս մասը չեն անցել. գուցէ նրանք վաղը կանցնեն, այդ միենոյն է, դրանք նեխուած, լուծուած դիակներ են, ինչ պէտքէ սպասել...

Ինչպէս միշտ, այնպէս էլ ներկայումս Հայկական խնդրով հետաքրքրւող կառավարութիւնները, որ ղեկավարւում են իրենց պետական շահերով, ոչ մի կասկած չկայ. ձեր առջևն է պատմութիւնը, ձեր առջևն է նոյն իսկ ինքը, երեք պետութիւնների կազմած „իրենց թղթին չարժող“, „վիժուած ռէֆորմների“ թարմ ծրագիրը և վերջապէս ժամանակը.—

Այդ ռէֆորմները ծրագրուել են Տաճկահայաստանի համար՝ իբր վերջ տալու տիրող պայմաններին. այդ պայմանները շա՜տ վաղուց գոյութիւն ունէին, դրանք ոչ երեկուայ ծնունդ են և ոչ էլ անցեալ օրուայ. դիպլոմատիան այդ շատ լաւ գիտէ, ի՞նչ է արել, ոչինչ։ Մի րոպէ մոռանանք ճշմարտութիւնը և ենթադրենք, թէ դիպլոմատիային Տաճկահայաստանի իրերի դրութիւնը յայտնի եղաւ միայն Սասունի կոտորածից յետոյ. իսկ ահա շուտով լրանում է տարին, ի՞նչ է արել նա.— Սասունի տմարդ կոտորածից յետոյ անցան ձիգ ամիսներ, դիպլոմատիան երկար տատանւելուց յետոյ, հազիւ գործին պաշտօնական բնաւորութիւն տուաւ. երկար բանակցութիւններից յետոյ միայն բարեհաճեց ուղարկել Քննիչ-Յանձնախումբ՝ Սասունի կոտորածը քննելու. իսկ այս տարուայ մարտ-ապրիլ ամիսներին խմբագրեց ռէֆորմների ծրագիրը, մինչդեռ Բաշխպուզուկին ներկայացրուեց մայիսին. այժմ արդէն յուլիս ամիսն է սկսւում և այդ ողորմելի ռէֆորմները դեռ քաշքշւում են երեք պետութիւնների դեսպանների և Բարձր Դրան մէջ, իսկ միաժամանակ այն երկրում, որի համար խորհում են պետութիւնները, շարունակւում են նախկին պայմանները, շարունակւում է նոյն դժոխային կեանքը, տեղի են ունենում նոյն հրէշային գազանութիւնները։ Խորհրդակցեցէք նրանց հետ։ Մի՞թէ այս փաստերից յետոյ էլ կարելի է կասկածել, որ պետութիւններին զբաղեցնողը իսկապէս երկրի շահերը չեն։ Եթէ պարզ է, որ պետութիւնները ղեկավարւում են իրենց շահերով, պարզ է նոյնպէս, որ նրանք պիտի լինին ի վնաս ժողովր-

գեան, այս է լօգիկական հետեւողութիւնը վերյիշեալ դատողութեան, որովհետեւ ներկայ պետութիւնները իրենց կազմակերպութիւնով ոչ այլ ինչ են, եթէ ոչ որոշ դասակարգի շահերի արտայայտիչը, հետեւապէս և նրանց պաշտպանը. ներկայ պետութիւնները այժմեան տիրող դասակարգի պահանջների, ներկայ հասարակական կազմակերպութեան ու նրա տնտեսական յարաբերութեան մարմնացումն են. և որովհետեւ տիրող դասակարգը իւր էութեամբ բոլորովին հակառակ է աշխատաւոր դասակարգի պահանջներին, պարզ է, որ ներկայ պետութիւնները ևս պիտի հակառակ լինին. ինչպէս տիրող դասակարգը իւր գոյութիւնը հիմնում է աշխատաւոր դասի աշխատանքի վրայ, իւր գոյութիւնը պահպանում է ժողովրդի բերնից խլած կտորով, նրա վզին նստած, նոյնն են և ներկայ պետութիւնները՝ իբրեւ հաւատարիմ արտայայտիչները տիրող դասակարգի պահանջներին։

Ներկայ պետութիւնների էութիւնը լինելով պաշտպանել մի որոշ դասակարգի շահերը ի վնաս ընդհանրութեան, աշխատաւոր ժողովրդի, հասկանալի է, որ նրանց կազմած ռէֆորմներն էլ չէին կարող լինել Տաճկահայաստանի ժողովրդների բաղձանքների հաւատարիմ արձագանքը։ Եւ այսօր իրենք, երեք պետութիւնների ծրագրած ռէֆօրմները պարզապէս հաստատում են, որ դրանք հալածւող, տանջւող, բռնաբարւող ժողովրդի շահերը պաշտպանելու համար չեն խմբագրւած, այլ պահպանելու այդ երկրում քաղաքական ներկայ պայմանները, statu quo, ինչպէս էլ պահանջում էին իրենց պետական շահերը։

ՈՍՏԻԿԱՆ ՀԱՃԻ ՏԻԳՐԱՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

Կեդրոնական կօմիտէի մայիս 7-ի, 61-դ նստին մէջ՝ քննութեան ենթարկելով այն մանրամասն տեղեկագրերը, որոնք կազմւած էին նշանաւոր հայ ոստիկան կօմիսէր Հաճի Տիգրանի ամենագձուձ գործունէութեան մասին, տեսնւեցաւ, որ

Հաճի Տիգրանը, որդի Ղալաթիոյ ս. Լուսաւորիչ եկեղեցիի նախկին լուսարարի մը, բաւական ատեն ծառայած է նոյն տեղ հօրը պաշտօնով, ժամանակ մը սպասաւորած է նոյն եկեղեցիին քարոզչին Յովսէփ վարդ. Այվազեանի քով, և ապա ընդունած է սարկաւագութեան կարգը։

Ոստումով մը, որ այնքան սովորական է մեր մէջ, եկեղեցական կոչման պատրաստւող այդ գարշելին, իր ընդունակութիւններուն աւելի յարմար կը գանէ ինքզինքը նուիրել զզւելի գործի մը, որ շատ աւելի շահաւոր կրնար ըլլալ իրեն, այն է լրտեսութեան։

Եւ հաշիւը սխալ ըրած չէր։

Տիգրանն՝ ի բնէ արդէն խօսու, սրամիտ, ճարպիկ, առաջին օրէն յաջողութիւն գտաւ իր նոր ընդգրկած ասպարէզին մէջ, ու այնքան պէտք պիտի ունենար հիմա իր ընդարձակ ծանօթութիւններուն, Ղալաթիոյ և Բերայի հայերուն, մանաւանդ կրթւած դասակարգին, որոնց հանդիպելու և ճանչնալու շատ առիթներ ունեցած էր Ղալաթիոյ եկեղեցիին ու խորհրդարանին մէջ, ուր կը գումարուէին Ազգային Ժողովի նստերը, ուր տեղի կունենային այլ և այլ խորհուրդներու գումարումները, ուր կը գտնւէր Ազգային Մատենադարանը, ուր վերջապէս, իր վարդապետի սենեակին մէջ, յաճախ տեսած էր այդ դէմքերը։

Իր գործունէութիւնը թէև բանուկ, բայց աչքի չէր զարկած տակաւին, երբ վրայ հասաւ տէր Սուքեասի սպանութեան փորձը Մայր եկեղեցիին մէջ։ Այդ օրը հաճի Տիգրան հոն կը գտնւէր իր պաշտօնին բերմամբ. ճանչցաւ երեք ահաբեկիչները և կառավարութեան մատնեց անոնք։

Այնուհետեւ ա՛լ բացւած էր իր ճամբան. ոստիկանութեան նախարարի մասնաւոր ուշադրութեան արժանացաւ հիմա, ո՛չ միայն իր մասնաւոր յատկութիւններով, որոնք գնահատելի էին լրտեսութեան գործին համար, այլ և իր կատարած այդ նողկալի արարքով, որ իր գործունէութեան առաջին շրջանին գլուխ գործոցն եղաւ։

Ժողովրդին համար պատուհաս մը և ոստիկանութեան համար գիւտ մը եղաւ հաճի Տիգրան. առաջին անգամ ըլլալով՝ Նազըմ փաշա անոր անձին մէջ գտաւ գործին մարդը. և հաճի Տիգրան շուտով ոստիկան և ապա ոստիկան-կօմիսէրի աստիճանը բարձրացաւ։

Ալ անկէ ետքը հաճի Տիգրանի մատը ոստիկանութեան ամեն գործի մէջ կարելի էր տեսնել։

Խուզարկութիւն մը հարկ էր ընել հայու մը տան մէջ, Պոլսի ո՛ր և է թաղ մը, անոր ցուցմունքներով, առաջնորդութեամբ ու մասնակցութեամբ կը կատարւէր։ Յամառ բանտարկեա՞լ մը պէտք էր խոստովանցնել, հաճի Տիգրանի ճարտարութեանն էր, որ դիմում կընէին։ Յեղափոխականներ որսալու կամ պատահմամբ գտնւած հետքեր բանալու և գաղտնի հետապնդելու գո՞րծ մը կար, սարկաւագութենէ վիժած հաճի Տիգրանն էր, որուն կը յանձնւէր այդ դժւարին ու փափուկ գործը։ Կը ծպտէր, ինչպէս ոչ ոք փորձած էր իրմէ առաջ. կեղծ ծամերով, կեղծ մօրուքով, մուրացկանի հագուստով, կառապանի տարազով, ջրհանկիրի նման, վերջապէս այն ամեն կերպով, որով կրնար մուտք ունենալ ժողովրդի այլ և այլ խաւերուն մէջ։ Տիգրան յոգնիլ չէր գիտեր. իր ամբողջ մտաւոր կարողութիւնները լարած՝ անձնատուր էր եղած իր գործին, ուր Թուրք ոստիկաններու համբաւեալ իշային տմարութիւնը կատարեալ ասպարէզ մը կը բանար իրեն, առանց մրցորդի։

Թուրք ոստիկանութիւնը մինչև հիմա ունեցած չէր հաճի Տիգրանին նման հետախոյզ մը։

յափշտակեց Բաշկալայից, Հասփստանից, Էրնկեանից, Առակ և այլ գիւղերից հայերի հողերը, որի ժամանակ եղերական մահով այնքան հայեր մեռան բանտում և դաշտում ու այդքան հողերից ոչ մի կտոր Համիդը չը տուեց իր փեսային, այլ բոլորն անցաւ իր ու գայմագամի որկորը։

Մինչև նոյեմբերի սկիզբը մօտ 200 տուն փոխադրվեցան սամանեան հողը, Աղբակ և տեղաւորվեցան հետևեալ հայ գիւղերի մէջ. 1) Առակ, ուր հաստատվեց ինքը Մամէն, 2) Բազ, 3) Մալկավա, 4) Էրեսան, 5) Հասփստան, 6) Սորան, 8) Խառատուն, 8) Զուխ, 9) Էրնկեան և 10) Աշկերտ։ Հայ գիւղացու ամբողջ ձմեռուայ պաշարը շիկակներու ձեռքի տակն է։ Ինքնակոչ բարբարոս հիւրերը ինչ ասես չեն հանում գիւղացու գլխին, իսկ նա ձեռքերը ծալած, դրան ետևը կանգնած, իբրև մի անշունչ դիակ, տեսնում է, ինչպէս իր տան վերի գլուխն աղա շիկակը նստած՝ լափում է իր սեփական քրտինքը, Բահրիի, ողորմած կայսեր Սուլթան Համիդի հրամանով։

Այս այսպէս լինելուց յետոյ, Աղբակի գիւղացին փոխանակ անձնուէրներին հետևելու, օրինակ է վերցնում այն զզուելի ու վախկոտ հայերից, որոնք սարսափի տակ ամեն բան թողած, մերկ ու տկլոր, փախչում, գաղթում են Պարսկաստան, ուր զրկված ամեն բանից, սրա, նրա դուռը մշակութիւն անում, փողոցներն ընկած հաց մուրում և կարճ ժամանակում մաշվում, փչանում։

„Ամենայն տեղ մահը մի է“, աղբակցիներ, բայց հազար երանի նրան, ով իր դիակը թողնում է իր սիրելի հայրենիքում։

ՆԱՄԱԿ ԿԱՐԻՆԻՑ

Մեր, էրզրումցիներիս, դրութիւնը օրից օր վատանում է. տեղացի և շրջակայքի գաղանաբարոյ թիւրքերի և մեր անսիրտ ու անտարբեր Սուլթանի անունով կնքված արիւնարբու հեծելազօրքից կրած անհամար նեղութիւնները բաւական չէին. այժմ վրայ հասաւ սովը, լրացնելով այդ մարդանման վագրների թողուցած պակասը։ Բառի բուն նշանակութեամբ մեր վերայ դժ էն մնացել. էհ, մեռած ենք, թաղող չունենք։ Մի ժամանակ մեր, Բասէնի և Օվայի (դաշտ) հացը առատութիւնից ամբարներումն էր փթում, այժմ թէ Օվացին և թէ Բասէնցին ոչ մի հատիկ ցորեն ունեն, ոչ էլ մի հատ կոպէկ։ Թուեմ պատճառները, թէ ինչու առաջ ամբարներում փթում էր և այժմ ինչու ուտելու բան չկայ, կարծում եմ պէտք չէ, ո՞ւմը յայտնի չէ։

Քաղաքի հացթուխները ցերեկն անգամ փակ են պահում իրենց փուռի դուռը և խափանքները, որովհետև քաղցածների բազմութիւնը կարող է ամեն րոպէ ներս խուժել ու թալանել հացը։ Խափանքի վերայ մի փոքր ծակ կայ բացված, այնպէս որ հազիւ կարելի է մի հատ հաց դուրս տալ։ Դէպի այդ ծակը հարիւրաւոր ձեռներ. կան պարզված փողով, „հաց տո՛ւր, հաց տո՛ւր,“ լսվում են անդադար, բայց հազիւ մի քանի րոպէ,— հացն արդէն վերջացել է, խափանքի ծակը փակվում է, և խեղճ ժողովուրդը յուսահատ, վիզը ծուռ, մնում է այնտեղ աչքերը ջրակալած ու յառած դէպի խափանքի ծակը։ Ամեն օր, երեկոյեան ժամի մէկից մինչև երկուսը (ըստ թիւրքաց) 2 տարեկանից մինչև 4 տարեկան երեխայք մերկ, ոտաբոբիկ, ցրտից դողդողալով և ձեռքերը բերանները կոխելով, խփում են դռները և աղիողորմ ձայնով ասում. „ողորմութիւն արէք, մի պատառ հաց տուէք, արևներիդ զուրբան...“ Եւ այսպէս հազար աղաչանք, որոնց ասողի լեզուն անգամ յաճախ չէ հասկացվում, որովհետև տեսնում ես այդ փոքրիկների լեզուն դեռ չէ բացված, զարմանում ես, թէ այս փոքր երեխան ինչպէս կարողացաւ դուռը խփել կամ դրան զանգը հնչեցնել. և այդ րոպէին քիչ հեռու, աւելի մթնումը, նկատում ես մի ստուեր կնոջ կամ տղամարդու, որը իր ամօթից ինքը չի համարձակվում մօտենալ ձեռք պարզել, որովհետև մի տարի առաջ ինքն էր ողորմութիւն բաշխում աղքատներին, խանութ ունէր, գործ ունէր, բայց այսօր նա զրկված է այդ բոլորից և կարօտ մի պատառ հացի։ Այդ փուռչիները ալիւր գնում են թուրք աղաներից ու բէկերից, որոնք վաղօրօք հաւաքել են ցորեն և ալիւր ու այժմ եռապատիկ գնով ծախում են։ Փուռչիներն այդ ալիւրին խառնում են, ինչ որ հնարաւոր է խառնել, օրինակ, աւազ, կիր, փայտի թեփ և այլն։ Մարդ սոսկում է այդ հացի երեսը տեսնելիս. ցեխն աւելի լաւ է։ Մինչև այժմ մօտ 20 ընտանիք միայն քաղաքից գաղթել են, դրանց մի մասը հաց գնելու, իսկ միւս մասը թուրքի և քիւրդի զուլումից ազատվելու համար։

Ալիւրը ծախվում է լիդրը (20 ֆունտից մի քիչ պակաս) 15-17 դրամ (1ր. 50կ.-1ր. 65կ.)։ Այդ գինն ինքը ըստ ինքեան բարձր գին չէ. էրզրումցիք 1880-1881թ. 25 դրամով էլ ալիւր գնեցին, բայց այն ժամանակ թէ քաղաքացիք քիչ թէ շատ փող ունէին և թէ ալիւր կճարվէր, մանաւանդ որ քաղաքի և գիւղերի թուրք հասարակութիւնն այն աստիճան գաղանացած չէր։ Այժմ՝ գրէթէ փող չկայ և քաղաքի դռներում պահապաններ են դրված, որ քաղաքի մէջ մտած ալիւրը, լինի դա սեփական տան համար կամ ծախու, մի և նոյն է՝ բոլորն ուղարկում են բազար, ուր մի պարկ ալիւրի վրայ թափվում են 10-15 թուրք և մէկը միւսի ձեռքից խլում. իսկ հայն իրաւունք չունի բազարում ալիւր գնելու, քանի "իսլամ էլլիկը" չի գնել իր ուզածի չափ։ Այսպիսով ոչ մի հայ չի կարող բազարից մի բուռն ալիւր ազատ տանել իր տունը, կերակրելու իր ընտանիքը, իր քաղցած զաւակներին։ Վերջապէս հայերն ստիպված՝ այսպիսի մի միջոցի դիմեցին. իրենց ծանօթ մի թուրքի կանխիկ վճարում են մի պարկ ալիւրի համար 20-30 դրամ, որ իրանց փոխարէն մի պարկ ալիւր գնէ, բայց այդ միջոցի հետևանքն էլ աւելի վատ դուրս եկաւ, որովհետև գտնվեցան այդ ծանօթների մէջ այնպիսիները, որոնք թէ կանխավճարը և թէ ալիւրը միասին կերան, ալիւրի փոխարէն յանձնարարողին հայհոյանք և ծեծ տալով։

Սրանից 3 շաբաթ առաջ թիւրքաց կանոնաւոր զինուորներից երեք հոգի մտնում են վերմակներ շինող մի հայի խանութ, որպէս վերմակ գնող. սկսում են սակարկել և կամենում են երկու հատ վերմակ իսկական

հեծեալ և հետիոտն ոստիկանների հրացանի կոթերով տուած հարուածներին. տկլոր և բոբիկ կանայք շարունակում էին իրենց յամառ յառաջխաղացութիւնը. Նոցանից շատերի ոտներից, ձեռքերից ու գլխից արիւն էր հոսում, բայց դեռ էլի չէին լռում ամենահամարձակ կերպով երեսներին տալ նրանց անամօթ վարմունքը: Պէտք էր տեսնել նրանց վիճակը այդ ժամանակ: — Բողոքող կանանց այդ դրութեան մէջ յաջողւում է քաղաք մտնել և ահագին իրարանցում պատճառել հայ և Թուրք հասարակութեանց մէջ: Ջարդուած ոստիկանները հազիւ կարողացան յուզման առաջն առնել: Սասունցի կանայք մերժեցին կառավարութիւնից տրուած ուտեստը և գիշերելու յատկացրած տեղը: Այս եղելութիւնը յայտնեց քննիչներին: Ես աչքով տեսայ, թէ ինչպէս փողոցով անցնելիս պատի տակ շարուած սասունցի կանայք ընկան քննիչներու ոտները և նրանց աղերսագիր տուին: Լրտեսների, ծպտեալ ոստիկանների թիւը խիստ շատացել է Մուշի մէջ, որտեղ որ դուրս են գալիս քննիչները, խմբերով ընկնում են նոցա ետեւից: Ոստիկանութիւնը ամեն ջանք գործ է դնում, որ ոչ մի սասունցի չմտնէ Մուշ: Վկաներից շատերը, որոնց մէջ և 29 սւինի վէրք կրող կնիկուզանցի հայ, քննիչներին ներկայանալու համար ստիպուած էր ծպտել և կանանց շոր հագնել: Մի խումբ պաշտօնեաներ Դալըբ էֆէնդիի առաջնորդութեամբ ընկել են աշիրէթներու մէջ համոզելու, որ սոքա ասեն, թէ իրանք քրդերը արին կոտորածը: Բայց այս բանը չյաջողուեց նրանց: Քրդերը խելացի են. նոքա բացարձակ գոռում են, որ կանոնաւոր զօրքը արեց կոտորածը, իսկ իրանք միայն թալանով զբաղուեցին: Մի քանի օր առաջ քննիչները դուրս են եկել Մուշից և գնացել են Առաքելոց վանքը (մէկ և կէս ժամ հեռու). Մշոյ հայ հասարակութիւնը այս անգամ էլ ոգևորիչ ցոյց է անում նրանց: Ես ականատես էի անգլիական դելեգատի ձիապահի (էրզրումցի հայ) յուղարկաւորութեանը թափորին հետեւում էին Մշոյ մէջ նմանը չտեսնուած բազմութիւն. ոստիկանների ու լրտեսների դէմքը չէր փոխում նրանց ուրախ տրամադրութիւնը:

Մահմեդական ազգաբնակութիւնը ըստ երևոյթին այս կողմերում էլ խաղաղ տրամադրութեան մէջ է, բայց գաղտնի խորհուրդներ միշտ տեղի են ունենում: Ֆանատիկոսական զգացմունքներից դրդուած՝ Թուրքերը հայերից վրէժխնդիր լինելու ծրագիրներ են կազմում, նրանց դրութիւնը դեռ ևս սպառնական է: Հաստատապէս գիտեմ, որ Խիզան գաւառում գտնուող (Բիթլիսի վիլայէթ) շէյխերից մէկը — հռչակաւոր շէյխ Ջելալեդդինի ժառանգներից — անցեալ ամսոյ վերջերքը իւր գլխին հաւաքել էր մօտաւորապէս 3-4 հարիւր հոգի վիլայէթի հայերի վրայ յարձակում գործելու համար: Նրա այդ մտադրութիւնը դեռ ևս չիրագործուեց, հաւատացնում են, որ կառավարութիւնը ազդու միջամտութիւն է գործ դրել արգելելու համար: Ինչ որ էլ լինի, մի բան սպառնում է հայերին, տեսնենք, ռումբը երբ կը պայթի:

Բիթլիսում մի խումբ էֆէնդի ու աղաներ, թւով 12 հոգի, դեռ ևս մնում են բանտում: Մի քանի անգամ սրանց առաջարկութիւն է՝ եղել ստորագրել շնորհակալութեան թուղթ ու դուրս գալ բանտից, բայց մերժել են: Ներկայ կուսակալը արտաքուստ բարի, բայց ներքուստ շատ վտանգաւոր մարդ է: Ասում՝ են, մի ամիս առաջ նահանգի կրթական տեսչի կողմից առաջարկութիւն է եղել՝ հայոց ուսումնարաններում, բացի կրօնից, մնացեալ առարկաները աւանդել թուրքաց լեզուով: Եղած բողոքների վրայ Իզմիրլեան միջամտել է և այժմ հարցը մնում է նախկին դրութեան մէջ:

Մուրադին և իւր ընկեր Յովհաննիսին մահուան վճիռ է արձակել, իսկ մնացեալներին 15 տարի բանտարկութեան:

Մշոյ մէջ երկու յայտնի մատնիչներ թունաւորել են մէկը միւսին. մինը սատկել է արդէն, միւսը հոգեվարքի մէջ է:

ՋԵՐՄԱՁՈՐ—ՇԱՏԱԽ

„Սասունը անցա՜ւ, մարեցա՜ւ բոցբոցուած խարոյկի մը նման“, թերևս ասեն ոմանք. բայց մեր կարծիքով նա չի անցեր և պիտի չանցնի, որչափ ալ զոհեր տըուած ըլլայ: Նա կայրի տակաւին, ինչպէս այրած է դարերով միշտ իւր փառաւոր անունի հետ: Մենք կը ճանչնանք սասունցուն Արաբիայի ամիրապետներու ժամանակէն և աւելի առաջ. նա միշտ անվախ առիւծ եղած է և պիտի մնայ:

Իսկ անցող մարդը վասպուրականցին է, որ չի համարձակիր սասունցու նման ձայն բարձրացնել և հերոսի պէս նահատակուել. նա ոչխարի նման վիզը ծռած սպանդանոց կը վազէ ու այնպէս կը մորթուի, կանցնի՝ առանց ճիչ մը անգամ հանելու:

Քաջբերունեաց երկրէն գիւղերով կը գաղթեն, չըկրնալով դիմանալ կառավարութենէն թելադրուած քիւրդերու սոսկալի հարստահարութիւններուն: Գիւղերը կամայանան, դաշտերը անապատ կը դառնան, ու խեղճ գիւղացին ոչինչ չկրնար մտածել այդ մասին: Անոր միակ միջոցը գաղթելն է, անօրէններու ձեռքէն ազատուելու համար:

Ու Շատախ, մեր նախկին Ջերմաձորը, 4-5 տարիէ վեր արեան ճապաղիք դարձած է: Յայտնի աւազակապետ Շաքիր դեռ տարի ու կէս առաջ էր, որ սպաննեց չորս աննման թաղեցիներ, որոնց համար ամբողջ Շատախը սուգ պահեց: Անկէ վերջ ու առաջ քանի՛ քանիներ այնպէս սպանուած են քիւրդերէն և կառավարութեան ձեռքով: Այդ անխիղճ բռնապետներ՝ բոլոր գիւղեր իրենց սեպհականութիւն դարձնելով մէկտեղ՝ չեն շատանար, ոչխարի նման կթելէ ու կապանին ալ:

Ամեն քիւրդ աղան իրեն թեմական հայ գիւղեր ունի, որոնցմէ տարեկան որոշ քանակութեամբ իրեն բաժին կը վերցնէ, տասանորդէն շատ աւելի, նեղ ընկած ատեն բանի կերպով կը պահանջէ, ինչ որ պէտք ունենայ, մերժել չի կրնար ըլլալ:

Թշուառ շատախցին՝ երկու երեք անգամ հարկ վճարելով ու ամէն տեսակ զրկանքներ կրելով, դարձեալ անբաժան կապուած է իւր սիրելի երկրին, իւր գեղեցիկ լեռներուն։

Զօրս տարիէ վեր տաճիկ կառավարութիւն սկսած է բացարձակապէս ճզմելով քամել շատախցուն, հնձանի նման։ Նա՝ Շաքիրին իրեն գործիք դարձնելով, չբաւականացաւ, նա քիւրդի հարստահարութիւններէն գոհ չմնաց, ու հիմա սկսած է ինք արձակ համարձակ ճնշել ու կեղեքել։

1892 թուի վերջեր Շատախի մէկ յիսնապետի սպանութիւնը Ծիծանց գեղի մէջ Շաքիրի երկու ծառաներու և Սիւգկնի ձորի մէջ մէկ ոստիկանի և մէկ թիւրքի սպանութիւնը կատաղեցուցին, որոնք պարզ վրէժխնդրութեան ցոյցեր էին՝ տաճիկ կառավարութիւնը կատաղեցուցին և նա իւր փրփրալի զայրոյթը, անարգ կրտղանքը թափեց անմեղ գիւղացիներու վրայ։ Բանտը լեցուեցաւ թաղեցի, կաճէթցի և ուրիշ գիւղացիներով, ու մինչև հիմա կը շարունակուին ձերբակալութիւններ, որոնցմէ և ոչ մէկը մեղաւոր է։ Ձերբակալութիւններէն մեծ մասը, մօտ 40 հոգի, Վանի կեդրոնական բանտը փոխադրուած են, ուր կը մնան թշուառ, անօգնական, մերկ ու նօթի։

Ամբողջ Շատախը սոսկալի տագնապի մէջ է։ Ներկայ րոպէն ճգնաժամ մըն է շատախցու համար. եթէ նա փորձէ սասունցու նման վերջին փորձ մը, գուցէ և ապրի, ապա թէ ոչ, այդ գեղեցիկ ոյժը կորսուած է այլ ևս։

Բանտարկուածներուն ազատուիլ չկայ, փախստականներուն ապաստանարան չկայ, մատնութիւններուն չափ սահման չկայ, կեղեքումներուն, հարստահարութիւններուն յագենալ չկայ, սրբապղծութիւններուն հաշիւ չկայ։

Քիւրդը կը սպառնայ եկեղեցու կոչնակի ձայնը դադրեցնել, տաճիկ զինուորը՝ ճերմակ շուն խաչերով զարդարելով, թաղի մէջ կը պտտցնէ, սպառնալով Սասունի նման կոտորել և Շատախը։ Խեղճ գիւղացու կայքը՝ մէկ թաղիքը կամ կապերտը, կամ եզն ու ոչխարը բռնի կը ծախէ կառավարութիւնը և իւր տուրքերը կը գանձէ։ Քիւրդը հազարներով կը տանի ոչխարը, փեթակները անոնց համար կը պատրաստին մեղր, աշխատասէր հայ կինը անոնց համար կը պատրաստէ իւղ և ամէն տեսակ բարիք։

Ու ծայրայեղ յուսահատութեան մէջ, սասունցու նըման շատախցին ալ աչքերը յառած օգնութիւն կը խնդրէ պաղատագին իւր եղբայրներէն։

Օգնութի՜ւն ուրեմն, ով որ կարեկցական նայուածք մը ձգեց Սասունի վրայ։ Օգնութի՜ւն... քանի չէ փչեր իւր վերջին շունչը շատախցի լեռնային կարիճ հայը։

ՆԱՄԱԿ ԳԸՐՇԻՀՐԻՑ

Եօզղատի և շրջակայ հայ գիւղերու երկրագործներն իրենց քաշած նեղութիւններէն զատ, տակ մը անգամ չունին սերմի համար։ Երկրագործական անունով կազմած բանկան ալ աւելի հարուստներուն համար է. հայ գիւղերուն և ոչ մէկին մէկ տակ տուած չէ, ուստի աղքատ գիւղացիք չեն կրնար ոչ ցանել և ոչ վարել։ Արդէն օրապահիկնին հայթայթելու անկարող քրիստոնեաներու վրայ տուրքերն ալ ծանրացած են, որոնց գանձելու համար, այժմ խումբ խումբ զօրքեր կը ղրկուին։ Զօրքերն իրենց ու ձիերնուն փորը կշտացնելէ վերջ անլուր անկարգութիւններ կընեն։ „Ծօ, անհաւատ գեաւուրներ, գնացէք մեզի մէկ մէկ ալ աղջիկ բերէք, ապա թէ ոչ հիմա ձեր գիւղերը կայրենք. հաւատոյ թշնամիներ, արդէն ձեր մահը հոգին և պատիւնիդ կուրանի օրէնքով մեզի հելալ է“ ըսելով, ամէն վայրագութիւն կընեն՝ մուխթարները կը ծեծեն, կը վիրաւորեն, անոնց տուները մտնելով, մանկամարդ կնիկներու և աղջիկներու մազերէն բռնելով և քաշելով, կը բերեն սենեակը և ամուսնոյն կամ նշանածին ներկայութեամբ... քաղաքակիրթ ազգերու մտքէն և երևակայութիւնէն չանցնելուն համար, չափազանցուած կարծելէն կը կասկածիմ. սակայն ճշմարտութիւնը այս է։ Այո՛, դիտմամբ ամուսիններնուն ներկայութեանը անպաշտպան սիրելիներնին կը գրկեն և իրենց գազանային ցանկութեանը կը զոհեն։ Սիրելիներնին այսպէս բռնի կերպով անպատուելը աչքով տեսնելու հարկադրուող թշուառներով կը լեցնուն դարձեալ բանտերը, որովհետև տակաւին լեզունին կը խօսի, կը գանգատին, որովհետև զիրենց պաշտպանելու պաշտօն ունեցող կառավարութեան կը գանգատին։ Ահա Մուստաֆա փաշայի նախագահութեամբ յանձնախումբի կատարած արդարութեան պտուղները և աւելի ահաւորները։

Արդարութեան դուռն անգամ գոց լինելով, որո՞ւն և ո՞ւր տեղ դիմելու է. մեր համբերութիւնը հատաւ։ Քաղաքակիրթ աշխարհը այս տեսակ բռնութիւններ, որք տեղի ունեցան 1860-ին Դամասկոսի մէջ, 1878-ին Պուլկարիայի մէջ, լսած ու պարագաներովը տեղեկացած առեննին օգնութեան հասածին, մինչդեռ այս բռնաբարութեանց այս աստիճան ցուրտ աչքով կը նային։

Երկու ամիս առաջ Կեսարիոյ Թալաս գիւղէն, Անգարայի Գալէճուք գաւառակի մէջ վաճառականութեամբ զբաղող Գէրպէրեան Ղազիր Գալէճըքէ 5 ժամ հեռաւորութեամբ գտնուած Զապէլ գիւղէն անհետացած է։ Այս մասին յիշեալին ազգականները դիմեցին կառավարութեան, որ նոր թէև քանի մը անձեր ձերբակալեց, բայց ոչինչ մէջ տեղ չելաւ։

Կիւրինցի Շիրուանեան Ղազար, Գըրշէհրի Աւանօղ գաւառակի Չըպլուգ գիւղը տուտուր ըրած ատեն, զինեալ չէրքէզ ձիաւորներ տալով՝ „փատիշահը հրաման ըրած է, գեաւուրները պէտի սպանենք“ ըսելով, ցերեկ ատեն 200 թուրքի ներկայութեամբ անչափ կը ծեծեն, որ պատեխի պէս կը փռուի. ապա պարկի մը մէջ դնելով, երբ ձիուն կը բարձեն, ձիու մէկ կողմէն միւսը կը ձգեն. այս գործողութիւնը քանի մը անգամ կը կրկնեն։ Այս քստմնելի տեսարան դիտող խալամներն վերջապէտ գթալով, անոնց ձեռքէն կառնեն։ Չէրքէզները Ղազարին 60 ոսկին և ունեցածը կառնեն կերթան։ Վիրաւորը հոգևար վիճակի մէջ հազիւ Եօզղատ

կը բերի և թէև բողոք կը լլլայ, բնաւ ականջ չի կախուեր։ Երէք օր վերջ Ղազար կը մեռնի. այն ատէն կառավարութիւնը բժիշկ մը կը ղրկէ քննութեան.....

1894 թ. Նոյեմբերի 10-ին, Եօզգատի Ուզունլու գաւառի Զաթուկ գիւղէն, Քեահիա Յակոբի տղան կեսարիոյ Ճամբուն վրայ երէք հատ թիւրք գողեր ձորի մը մէջ կը սպանին և ունեցած ապրանքները ու ստակը կը գողնան։

Քիչ մը ատեն, Թէրչիլի գիւղէն Մուխթար Սարգիսի վրայ յարձակելով, կը սպանին և հետը գտնուած 10 մարդոց ականջներին, քիթերին կտրելով և ձեռքերին, ոտերին կապելով, արտի մը մէջ երեսի վրայ կը ձգեն և առանց ականջ կախելու անոնց լացին ու կոծին. անոնց քով գտնուած ստակ և ինչ որ կայ կառնին և կը փախին։ Ասոնց և ուրիշ շատ մը քրիստոնեաներու ծեծել, վիրաւորել և յափշտակելներին, հայ գիւղացիներու կողմէ անգամ մը ևս տեղական կառավարութեան հաղորդուեցաւ թէև, բայց դարձեալ կարևորութիւն չտրուեցաւ։

Հինգ, տասն և հինգ հոգի սպանել, 50-100 մարդ կողոպտել, ասոնք մանակի կորուստներ են։ Բայց ահա ամենէն սարսափելի կէտը հոս է։— կառավարութիւնը զմեզ ամբողջապէս ընջելու ճամբուն մէջ է. արդարութեան դատարանները մեզ համար գոցած են, հիմա յիշեալ շրջանակներու հայու մը իրաւունքը պաշտպանել հնար չէ։

Ո՞ր մէկը գրեմ. գետնափոր այրի մը մէջ քաշուած և այս գրերը գրած ժամանակն ալ, աչքերս որ կողմն ալ դարձնեմ, սպանութիւն, բռնաբարութիւն, վայրենութիւնէ, ուրիշ ոչինչ կը տեսնիմ...

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԴԵՐՋԱՆԻ

IV

Քաղաքէս 6-7 ժամ հեռի Պալապան Նահիէ հայաշատ ինձորեկ գիւղացի Կիւլապօղլի Խալիլ աղայի տասնամեայ բազմաթիւ ոճրագործութիւնք, չարագործութիւնք, կառավարութեան դէմ ըմբոստ գտնուելով՝ փախստական թափառելը եւ զինք ձերբակալելու գնացող կանոնաւոր զօրաց զինու զօրութեամբ դիմադրելը, կառավարական ձիեր գնդակահար սպանելը եւ այլն, քաջածանօթ են ոչ միայն Երիզայի բոլոր կառավարական պաշտօնատանց, այլ եւ Կարին ու Պոլիս բազմադիմի դիմումներ եղած եւ բողոքած է. սակայն ապարդիւն, վասն զի որչափ որ ձերբակալելու հրամաններ եկած են, բնաւ ձեռնարկ եղած չէ իրագործել, չնորհիւ նրա անձնուէր պաշտպան Վահիդ պէկին։ Խէլիլ, իւր զաւակները եւ արբանեկները ի բացակայութեան քանիցս կը դատին ու երկարամեայ բանտարկութեան կը դատապարտուին, ինչպէս Կարնոյ գաւառական թերթը ի պաշտօնէ կը յայտարարէ. սակայն Խէլիլ որոշած է բնաւ անձնատուր չլինել, ինչ որ ալ ըլլայ, որով ամենայն ազատութեամբ կը շարունակէ իր ոճրագործութիւնք եւ խժդժութիւնք։ Ասկէ մի քանի տարի առաջ Կարնոյ կուսակալ Հասան Խայրի փաշա քննական պատոյտի մ'առթիւ Երիզա գալու ժամանակ՝ Բթառիճ գիւղը Վահիդ պէկի հիւր կը լինի, ուր ի պատիւ իրեն եղած մեծայարգ ընդունելութեան եւ ասպնջականութեան փոխարէն կը չնորհէ Վահիդ պէկի ի վաղուց անտի երեւակայած եւ երազած Խէլիլի կայսեր բարձրագոյն արժանացումը։ Հետեւեալ օրը Վալի փաշան իւր հետ քաղաք կը բերէ՝ Վահէտ պէկը եւ Խէլիլ աղան, որք ամենայն յոխորտանօք կը շրջին բարձրագլուխ եւ օրիպանած։ Ո՛վ պիտի համարձակի դիտողութիւն մ'ընել Խէլիլ աղայի ընթացից մասին, քանի որ կայսերական գթութեան արժանացած է եւ իւր անզուգական պաշտպան Վահիդ պէկի հովանաւորութեան տակ կը գտնուի։ Նահանգապետի մեկնելէն վերջ, Խէլիլ կը դառնայ իր բնակավայրը եւ հաւատարիմ իւր վաղեմի սովորութեանց, կանդրադառնայ իր հին արհեստին. իւր ազգական եւ Էշիրէթի պէտ Զէյնալ աղան, որ իր գործառնութեանց մասամբ ապրելք կը լինէր, կը սպանէ։ Ասոր եւ ուրիշ արարքներուն համար կառավարութիւնը կը հետամտի ձերբակալել զայն եւ իմանալով, որ այն օրերը քաղաքէս 3-4 ժամ հեռի, Քիշտիմ գիւղին մէջ կը գտնուի, կը որոշէ զինու զօրութեամբ ձերբակալել զայն։ Սակայն զօրաց գումարտակը տակաւին ճամբայ չելած, որոշումը Վահիդ պէկէն, որ նոյն միջոցին վարչութեան անդամ էր եւ Խէլիլի երաշխաւոր, կը հաղորդուի Խէլիլի, որ կը փութայ ապաստանիլ իւր անառիկ եւ ամրոցեալ գիւղն՝ Ղօզուլճան։ Զօրաց գումարտակը՝ Թափուր աղասիին հրամանատարութեան տակ, անդ ատ թափառելէ վերջ, կը վերադառնայ ձեռնունայն։ Խէլիլ, իբրեւ ժանդախտ եւ պատուհաս Խնձորկի եւ շրջակայ հայ գիւղացոց, կը շարունակէ իւր ընթացք մինչեւ անցեալ 1894 տարւայ վերջերը, որ ատեն կը բարեկամանայ չորրորդ բանակի Նազիլէ գայմագամի Իսմայէլ պէկի հետ, որու չնորհիւ Երիզա կուգայ եւ սկսի ազատ շրջիլ. սակայն հետեւեալ օրը, նախապէս ազդարարուած լինելով թէ՝ պիտի բռնուի, անյայտ կը լինի։ Ասկէ մի քանի օր առաջ Իսմայէլ պէկի զաւակը կը մեռնի. Խէլիլ ցաւակցութիւնը յայտնելու համար քաղաք կուգայ եւ Իսմայէլ պէյի հիւր կը լինի։ Կառավարութեան կիսացուի Խէլիլի գալուստը, որուն անգիտակ չէր արդէն եւ իբր թէ ինք կը հետամտի բռնել զայն, սակայն Իսմայէլ պէկ կը յայտարարէ՝ թէ իր հիւրը չկրնար կառավարութեան յանձնել։ Նոյն գիշերն իսկ Խէլիլ ի փախուստ կաճապարէ զինուորական բերդէն, ուր հիւր եղած էր Իսմայէլ պէկի։

Անհաւասիկ հակիրճ նկարագիրը սոյն գող, աւազակ, մարդասպան ոճրագործին եւ նրա մասին ի գործ դրուած կառավարական միջոցներուն, նաեւ նրա անբաժան պաշտպան եւ Բթառիճ գիւղի կոյս աղջկան բռնի առեւանգման ու բռնաբարման յայտնի հեղինակ Վահիդ պէկի, որոյ ի վարձ իր քաջագործութեանց եւ շահատակութեանց երբորդ կարգի պատուանշան կը տրի եւ որ ներկայիս մէջ ոգի ի բռին կաշխատի եղբայրը՝ նոյնպէս յայտնի հեղինակ առեւանգման եւ բռնաբարութեանց՝ Մէճլիսը իտարէի անդամ ընել տալ, որպէս զի կարենայ ազատ ու համարձակ գործել։

Սրդարեւ շատ ցանցառ կերպով գրուած են սոյն տեղեկագրի մէջ Խէլիլի եւ Վահերի արարքները։ Խէլիլ ներման արժանանալէ վերջ, միմիայն Զէյնալ աղան կտոր կտոր ընելով, չսպանեց, այլ Դերջանի Ղազազ գիւղէն, զուտ հայաբնակ, Առաքել Գրիգորեան, իւր կտրճութեամբ եւ աներկիւղութեամբ հանրածանօթ, անձն ալ Ղօզուլչայի տակը սպանել տուաւ 1893 թ. օգոստոսի մէջ։ Առաքելին եղբայրը՝ հաճին Տրապիզոն կը գտնուէր այդ միջոցին. երբ իմացաւ, անմիջապէս Երզնկա գալով բողոքներ տուաւ դատարանին, կառավարչին եւ Միւշիրիէթին, բայց բնաւ արդիւնք մը չունեցան։ Հաճին՝ Խէլիլ աղայի բացարձակ սպառնալիքներէն վախնալով, զիւղն ալ չկրցաւ երթալ, Երզնկայ բերել տուաւ իւր եւ իւր եղբօր ընտանիքները եւ

թողլով երեսի վրայ կամ աւելի ճիշտը՝ թողլով քիւրդերուն հողերն ու տուն տեղը, այսօր Երզնկայի մէջ յետին ծայր չքաւորութեան եւ խեղճութեան մէջ կը տառապին: Խէլիլ աղան նոյն տարին ղազաղչեաց եզներն ալ քշել տուաւ, երկու անգամ Սրավանէի (Դերջանի եւ Բաբերդի մէջ տեղ) լեռներէն մեծ կողոպուտ բերաւ՝ զարնելով կարաւանները: 94 թ. յուլիսի մէջ ի Սոլոմեր-Սառահունիք-յայտնի Պեղդէշէն տղոցը 400-ի չափ նորատունկ բարդիները կտրել տուաւ:

Խնձորեկ հայոց խոտերը, մարագները այրել, տաւարները, հօտերը քշել տանել ամէն աշուն Խէլիլ աղայի համար սովորական գործ մը դարձեր էր. բայց 94-ի սեպտեմբերի մէջ գիշեր մը իր յեղուզակ տղաքը խումբով մը կուգան Խնձորեկ քանի մի հայեր սպաննելու նպատակաւ, որք կը գտնուէին Հիւսէին անունով քիւրդի մը քով. բարեբախտաբար Հիւսէին աղային տանը պատը դեռ բոլորովին չծակած, կիմանան ներսինները եւ կը սկսին հաւար պօռալ. այդ միջոցին Հիւսէին աղայի եղբայրը դուրս ելնել ուզած ժամանակը՝ 27 գնդակով կը զարնուի ու կը մեռնի. գիւղացիք կը հասնին, Խէլիլի մարդիկը կը փախչին: Միւս օր գիւղացիք՝ հայ, քիւրդ կը լեցուին քաղաք, կը բողոքեն եւ կըսեն, թէ քանի որ Խէլիլը անպատիժ կը մնայ, մենք այլեւս չենք կրնար երթալ գիւղը եւ այլն, բայց լսող չի ըլլար: Բայց ի՞նչ կըսեմ. այս այն Խէլիլ աղան չէ՞, որ 92 թ. ամառը, առաւօտ մը, մօտ 30 զինեալ յեղուզակներով կոխեց Դերջանի Կուրտիլլէր գիւղը եւ գիւղացոց ամբողջ հարստութիւնը՝ տաւարի հօտերն ու նախիրը թալլեց, քշեց տարաւ, դիմադրելու համարձակող մի տասը գիւղացիներ ալ՝ այր, կին ծանրապէս վիրաւորելով:

Այս չափը կարծեմ բաւական է գաղափար մը տալու համար ի մասին Խէլիլ աղայի: Պալապանի եւ Դերջանի ժողովուրդք նրա անխօս ստրուկները դարձեր են, նորա ամէն մէկ հրամանները իբր պատգամ կընդունին, անցեալէն խրատուելով, գիւղացիք նորա ամեն կամայականութեանց կը զիջանին ու կը համակերպին. բողոքել այլ եւս մտքերնէն չանցնիր:

ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ՄԱԿԵԴՈՆԻԱՅՈՒՄ

Մակեդոնիայում ապստամբութիւն է. այս մասին մենք ստացել ենք մեր մի մակեդոնացի ընկերոջից տեղեկութիւններ, մի ընդարձակ նամակի հետ, բայց դժբախտաբար տեղի խիստ սղութեան պատճառով, անկարող եղանք տպագրել այս համարում. մենք կաշխատենք այդ անել եկող համարներում: Այժմ շտապում ենք յայտնել մեր վիճակակից ժողովրդին մեր անկեղծ բուռն համակրութիւնը: Մեր վիճակը ու թըշամին նոյնն է, մեր գործը ընդհանուր է, ձեռք տանք միացած ուժով կռուենք լէշակեր հրէշի՝ սուլթանական կառավարութեան դէմ. միայն սրա մահը կարող մեզ երջանիկ վիճակ բերել:

Մենք վերջին ժամին ստացանք Համիդիէի և կանոնաւոր զօրաց կիսաքաժինների հրամանատարի փոխանորդներից Մէհմէտ Բէհճի պաշտօնական գրութիւնը, որ շտապում ենք հենց այս համարում զետեղել: Թողնելով եկող անգամին մեր կողմից տալ մի քանի պարզաբանութիւններ, հրաւիրում ենք ընդհանուրի ուշադրութիւնը այս նշանաւոր դօկումէնտի վրայ:

Մանիչ վիրաբոյժ Թիւթիւնջեվի զարկման հեռագիրը, որ ստացանք յունիսի 27-ին (ն. տ.), անմիջապէս տպագրելով առանձին թերթիկների վրայ, ցրուեցինք:

—o—

ԱԶԴ

Վերջերս լսելով, թէ շատերը Դաշնակցութեան անունով նուէրներ եւ պարբերական վճարներ հանգանակած են առանց այդ գումարները հասցնելու ուր որ անկէ,- ասով կազդարարենք՝ մեր շրջանի մէջ գտնուող բոլոր խմբերուն, համակրողներուն եւ ընթերցողներուն, որ երբ Դաշնակցութեանս անունով իրենց վճարած գումարները հրատարակուած չը տեսնեն իրենց վճարած թուականէն ետքը լոյս տեսնող „Դրօշակի“ երեք-չորս թիւերուն մէջ, գիտնան թէ այդ գումարները չեն մտած Կեդրոնական Կոմիտէի սնդուկը: Ստիպողաբար կառաջարկենք, որ վճարողները փութան այդ պարագային մէջ դիմել „Դրօշակի“ խմբագրութեան, մանրամասն յայտնելով հասարակաց դրամը խլացնող մարդու անունը, մականունը, արհեստը եւ հասցէն, որպէսզի Կեդրոնական Կոմիտէն եւս այդ մասին հարկ եղածը ի գործ դնէ:

Կ. ՊՈԼՍՈՅ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԷ

ՆՒԻՐԱՏՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Վիշապ քաղաքի կեդրոնական սնդուկի մէջ ստացուեցան.

Աշտարակ խմբէն 100 դահեկան, Սուրհանդակ 30 դահ., Պարոյր 20 դհ., Ճ-ից կէս անգլիական, Բագար 40 դհ., Ա. և Ս. 40 դհ., Ա. և Ն. 20 դհ., Անի խմբ. 75 դհ., Կայծին 80 դհ., Վանօ 95 դհ., Նորաշէն 160 դհ., Արեւելեան 70 դհ., Քառս 10 դհ., Մաթէոսեան 70 դհ., Վարդանեան 60 դհ., Վրէժ 40 դհ., Թորգոմեան 140 դհ., Ցոյս 50 դհ., Ցոլեան 180 դհ., Թաթուլ 140 դհ., Պիծակ 150 դհ., Վառօդ 100 դհ., Խաչև 110 դհ., Պարոյր 20 դհ., Մուշեղ 20 դհ., Փիւսկիւլ 20 դհ., Կ. Թ. 10 դհ.

Գագիկ և Հեթում 1635 դահ.

Նիզակ քղ. սնդուկի մէջ ստացուեց օր. Բ. Ա. Մ-ից 800 դահեկան:

Նորաշէնից (Ս. Կ.) 100 րուբլի, Եալ-ից 100 րուբ., Գետաշէնից 15 րուբ., Ճառագայթից 150 րուբ., Ապառաժից 1000 րուբ., Թ-ից 100 րուբ., Ախթաս գիւղ-ից 100 րուբ., Կայծիկից 378 րուբ., Դամաւանդի ստորոտներում ապրողներից 205 րուբ., Բ-ից 600 րուբլի:

Ապառաժ Խ. 10 հրացան և 2148 փամփուշտ, Ապառաժ խմբի միջոցով Ս. Ց. №ից 10 այնալու, X-ից 105 այնալու փամփուշտ:

Հ-ի Ժ. ք. օր. Մ-ից 10 Ֆր., Գ-ի Բեր. ք. №-ից 5 մարկ:

Դաշնակցութեան անծանօթներից խնդրւում է թղթակցութեան եւ նւիրատուութեան համար դիմել.

L. Boole, 15, Augustus Rd. Hammersmith, W. London.

Վիեննա, Դաշնակցութեան ազատ տպարան